Բացատրական, թարգմանչական և այլ կրթական գործառույթների իրականացում ISMA համակարգի միջոցով

http://translator.am/ համացանցային հասցեում գործում է ISMA համակարգը, որն ապահովում է բազմաթիվ՝ բացատրական, թարգմանչական և այլ կրթական գործառույթների իրականացում:

Այս նյութում ներկայացնում ենք ISMA համակարգի ընդամենը մի քանի հնարավորությունների մասին համառոտ տեղեկատվություն, իսկ, թե **«Ի՞նչ է անում ISMA-ն»**, կարող եք կարդալ այստեղ՝ http://translator.am/am/help.html:

- **Հայերենի բացատրական բառարան**

Ապահովվում է հայերեն բառերի բացատրությունների ստացումը, ընդ որում բառերը կարող են լինել տարբեր ոլորտներից, հոլովված, խոնարհված, ներկայացված տարբեր սեռերով և թվերով: Բառի բացատրությունը ստանալու համար անհրաժեշտ է սեղմել «բացատրել» կոճակը: Բացվող էջում կերևան բառին համապատասխան հասկացույթների (բառի իմաստների) ցուցակը՝ իրենց բացատրություններով:

- **Գրաբարի թարգմանչական բացատրական բառարան**

Անհրաժեշտ է ընտրել մուտքային լեզուն՝ 14 լեզուներից որևէ մեկը, որպես ելքային պետք է նշել գրաբարը, ապա սեղմել թարգմանել կոճակը: Բերված իմաստներից յուրաքանչյուրի մոտ կբացվի լրացուցիչ ինֆորմացիա, որտեղ կերևա հանրագիտարան կոճակը: Հանրագիտարանին սեղմելով, բացվում է մուտքագրված բառի այդ իմաստի բացատրությունը, արևելահայերեն և գրաբար լեզուներով:

- **Հայերենի և 14 այլ լեզուներինի միջև երկկողմանի թարգմանչական բառարան**

Անհրաժեշտ է ընտրել մուտքային լեզուն, ապա ընտրել ելքային լեզուները (հնարավորություն կա ընտրել միանգամից մի քանի լեզու) և սեղմել թարգմանել կոճակը: Ներքևում բերվում է բառի թարգմանությունը՝ բոլոր իմաստներով:

- **Հայերենի ուսուցում հայերեն չիմացող սփյուռքահայերի համար**

ա) Հայերեն բառերի և տառերի ուսուցում

բ) Հայերեն բառապաշարի զարգացում

գ) Հայերեն բառի օգտագործման սխեմայի յուրացում

դ) Բառի կամ տեքստի ուղղագրության ստուգում

ե) Հայերեն նախադասությունների շարահյուսական վերլուծության ապահովում

- **Ուսումնական առարկաների հեռավար ավտոմատացված ուսուցումը հայերեն լեզվով**

Առցանց ուսուցման ժամանակ հեռավար ուսուցման ավտոմատացված կազմակերպումը (կախված համացանցում ուսումնական նյութի ներկայացման ձևաչափից) ուսումնական նյութի ընթերցման ժամանակ սովորողին հնարավորություն է ընձեռում մկնիկով նշել (իրեն անհասկանալի) յուրաքանչյուր բառ կամ բառակապակցություն և ISMA շտեմարանից ստանալ այդ բառի բացատրությունը և այլ ինֆորմացիա: Այս մեթոդը կիրառված է http://isma.polytechnic.am/ կայքում, մասնավորապես ավագ դպրոցի ԲՏՃՄ առարկաների որոշ դասագրքերի համար (http://isma.polytechnic.am/high_school.html):